

նուիրակ Մարտիրոս Վրդ. : Կ'ենթադրուի թէ Եպիսկոպոսը՝ Երուսաղէմայ միաբան մը պիտի ըլլայ, փոխանորդ կամ լուսարար, իսկ վարդապետները, յայտնի բան է, իրբեւ հիւր կամ ուխտաւոր գտնուած են յԵրուսաղէմ :

Հայ եկեղեցականաց ստորագրութիւններէն անմիջապէս յետոյ կը սկսի բուն դաշնագրութիւնը, նօտր գրով, այսպէս .

«Անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ : Կամեցան եւ ուզեցին, Փռանկի ազգն եւ Լուսաւորչի ազգն, որպէս որ են ամենեքեան քրիստոնեայք : Հանապազ բռնեն եւ ընդունին զայն սէրն եւ զայն միաբանութիւն որ ետ մեզ Քրիստոս, որ ժառանգեմք յամենայն ժամանակ յամենայն տեղիք . վասն այս պատճառիս որ եղեւ Երուսաղէմ, որ միաբանութեամբ եկին, մեծամեծք եւ տորլաթաւորք Հայոց ազգին . եկան առաջի պալիօզներուն, Փռանսացւոց պալիօզին, եւ Վենետիկեցւոց պալիօզին, ու Երուսաղէմայ արեղաներուն, եւ Հարապ եղած Փռանսացի եւ Վանատիկցի պազիրկաներուն հետն շատ խօսք եղաւ : Եւ յետոյ հաստատեցին եւ ամբացուցին իւրեանց մէջն հանապազ, վասն հակառակութեան որ եղեւ Երուսաղէմ իւրեանց մէջն, որ կտրվի այս խօսքն . խեռն եւ նախանձն զամէնն բառնան իւրեանց մէջէն : Եւ արարին նոր ուխտ եւ դաշինք, որ այս առջի եղած բաներուն մէկ մէկի չյիշեն, այլ մոռանան եւ դառնան առաջին մեր հայրենի աւանդն, որ սէր եւ միաբանութիւն կայր . յորժամ կամին պա-